



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

|                                                                               |                                                                           |
|-------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------|
| Հաստատված է<br>ՀԱԱՀ գիտական խորհրդի<br>կողմից<br>“06”. 02. 2015 թ. (արձ. № 9) | Վավերացնում եմ<br>ՀԱԱՀ ռեկտոր<br>_____ Ա. Թարվերդյան<br>“09”. 02. 2015 թ. |
|-------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------|

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2015

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**1. Ընթացակարգի նշանակությունը և կիրառման ոլորտը**

- 1.1. Սույն ընթացակարգը սահմանում է համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ) իրականացման համար ռեսուրսային բազայի ապահովման և կառավարման կարգը:
- 1.2. Ընթացակարգով սահմանված պահանջները պարտադիր են համալսարանի բոլոր ստորաբաժանումների կողմից իրականացման համար:

**2. Ընթացակարգի նկարագրություն**

**2.1. Ընդհանուր դրույթներ**

2.1.1. Համալսարանի հիմնական ռեսուրսներն են՝

- ❖ *Մարդկային ռեսուրսները* – դասավանդող կոմպետենտ անձնակազմ:
- ❖ *Ենթակառուցվածքը*, որը ներառում է՝
  - ❖ Շենքերը, աշխատանքային տարածությունը և կրթական միջավայրը:
  - ❖ Սարքավորումները, կրթական ինֆորմացիոն տեխնոլոգիաները:
  - ❖ Հաղորդակցման միջոցները:
  - ❖ Լաբորատոր մասնագիտական լսարանները՝ հագեցված մասնագիտական տեխնիկական և այլ միջոցներով:
- 2.1.2. Համալսարանում պետք է մշակված, ներդրված և աշխատանքային վիճակում լինեն ՄԿԾ-ների իրականացման ռեսուրսային բազայի ապահովման մեխանիզմներ և պլաններ՝ համալսարանի կրթական գործընթացի բարելավման, կարատելագործման և կրթական ծրագրերի ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովելու նպատակով:
- 2.1.3. *ՄԿԾ-ների իրականացման ռեսուրսները պլանավորելիս* անհրաժեշտ է հաշվի առնել՝
  - ❖ Ռեսուրսների ադապտացման հնարավորությունները փոփոխվող իրավիճակներում:
  - ❖ Ռեսուրսների ինտեգրումը համալսարանի ռեսուրսների կառավարման ընդհանուր համակարգի մեջ:

2.1.4. Համալսարանում իրականացվող ՄԿԾ-ները անհրաժեշտ ռեսուրսային բազայով և միջոցներով ապահովելու համար անհրաժեշտ է՝

- ❖ Որոշել և ապահովել ՄԿԾ-ի և դասավանդվող առարկաների համար ռեսուրսային բազան՝ նպատակների, խնդիրների, բնութագրիչների և ծախսերի տեսքով:
- ❖ Մշակել ներդրման մեխանիզմներ և միջոցառումներ:
- ❖ Գնահատել ռեսուրսային ապահովվածությունը՝ հաշվի առնելով շահակից կողմերի կարիքները և սպասումները:

2.1.5. Ռեսուրսային բազայի ապահովման հիմքում ընկած է ֆինանսների բաշխումը և կառավարումը:

2.1.6. Համալսարանի ղեկավարությունը պլանավորում և ապահովում է ռեսուրսային բազան՝ ՄԿԾ-երի պատշաճ ձեռով իրականացման համար՝ հաշվի առնելով շահակիցների կարիքները և պահանջները:

2.1.7. ՄԿԾ-ում ներառված յուրաքանչյուր դասընթացի համար ռեսուրսային բազայով ապահովվածության ուսումնասիրման և արձանագրման համար անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել անկետավորում համալսարանի շահակիցների շրջանում (մասնավորապես ուսանողների և դասախոսների շրջանում): Դրա արդյունքում հնարավոր է պարզել շահակիցների կարիքները և բավարարվածությունը ռեսուրսային ապահովումից՝ ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման տեսանկյունից:

## 2.2. Ռեսուրսների պլանավորում և կառավարում

*Ռեսուրսներով ապահովման աշխատանքների պլանավորման և կառավարման նպատակն է՝*

- ❖ Ուսուցման պայմանների ստեղծումը, որը պետք է նպաստի ուսումնառվող դասընթացի հասկանալուն և յուրացմանը:
- ❖ Կրթական գործընթացի ապահովումը ժամանակակից միջոցներով, սարքավորումներով, լաբորատոր բազայով:

### 2.2.1. Ռեսուրսային ապահովման պլանավորման քայլեր՝

- ՄԿԾ-ի պլանավորում:
- ՄԿԾ-ի կառուցվածքի շահակիցների պահանջներին համապատասխանության ուսումնասիրում և վերլուծություն:
- ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների անցկացման համար ռեսուրսային բազայի պլանավորում:

- Ռեսուրսային բազայի բաշխման մեխանիզմների մշակումը ըստ իրականացվող ՄԿԾ-ների:
- ❖ **Մեթոդական, նյութատեխնիկական և տեղեկատվական ապահովման պլանավորում**
  - Մեթոդական աշխատանքների իրականացման պլանների մշակում:
  - Նյութատեխնիկական բազայի պլանավորում:
  - Տեղեկատվական բազայի պլանավորում:
- ❖ Պլանավորումը իրականացվում է հաշվի առնելով ՄԿԾ-ի իրականացման և կոմպետենցիաների ձևավորման համար ռեսուրսային ապահովվածության մակարդակի գնահատականը՝ յուրաքանչյուր դասընթացի համար:
- ❖ Ռեսուրսների նկատմամբ պահանջը որոշվում է վերլուծության ճանապարհով՝
  - ❖ Առկա ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում:
  - ❖ Տվյալների ներկայացում ընդհանուր տեսքով:
  - ❖ Տվյալների վերլուծություն տարբեր մեթոդներով և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ:
  - ❖ Հաշվետվողականության պատրաստում և ներկայացում քննարկման:
- ❖ Ռեսուրսներով ապահովման պլանները ձևավորվում են համալսարանի ղեկավարության կողմից տարին մեկ անգամ:
- ❖ Ռեսուրսներով ապահովման գործընթացները ներառում են պլանային ֆինանսական գործունեությունը՝
  - ❖ Ֆինանսական պլաններում ռեսուրսների ձեռքբերման համար միջոցների առանձնացում:
  - ❖ Բյուջետային և արտաբյուջետային ֆինանսների բաշխում ռեսուրսների պլանավորման կտրվածքով:
  - ❖ Համալսարանի բյուջեի և ծախսերի պլանների կազմում և բաշխում:
- ❖ Պլանային բյուջետային գործունեության ընթացակարգը դրվում է համալսարանի գլխավոր հաշվապահի վրա:

## 2.2.2. Ռեսուրսների կառավարում

- ❖ *Ռեսուրսների կառավարման գործընթացների համար մուտքային տվյալներ են համարվում՝*
  - ❖ Հեռանկարային և տարեկան պլանները:
  - ❖ Ստորաբաժանումների դիմումները ռեսուրսների ձեռքբերման համար:

- ◆ *Գործընթացի ելքային տվյալներն են՝*

  - ❖ Ռեսուրսներով ապահովման պլան-գրաֆիկները:
  - ❖ Գործընթացի արդյունավետությունը որոշվում է ռեսուրսներով ապահովվածության բավարարվածության հաշվետվությունները:
- ◆ ՄԿԾ-ների իրականացման և ՄԿԾ-երով սահմանված ռեսուրսային բազայի վրա դրվող պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է որոշել և ապահովել ռեսուրսային բազան ամբողջությամբ:
- ◆ Անհրաժեշտ է սահմանել, թե ինչ պայմաններ և միջոցներ են անհրաժեշտ մասնագետների պատրաստման պահանջվող որակին և ՄԿԾ-ի նպատակ-ներին և ուսումնառության արդյունքներին հասնելու համար:
- ◆ Ռեսուրսների կառավարման գործընթացը անհրաժեշտ է ՄԿԾ-ների իրականացման արդյունավետության ապահովման համար:
- ◆ Ուսումնական միջավայրի կառավարման ուղղությամբ գործունեությունը նախատեսում է՝

  - ❖ Կրթական միջավայրի կառավարման ցուցանիշների պլանավորում:
  - ❖ ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման որոշում և ձեռքբերում՝ լսարաններ, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, լաբորատոր և գործնական պարապմունքների անցկացման համար միջոցներ:
  - ❖ Պլանային ցուցանիշների հսկում, նրանց համապատասխանության որոշում դրված պահանջներին:
  - ❖ Կրթական միջավայրի բարելավմանը ուղղված ընդհանուր նպատակների սահմանում:
  - ❖ Կրթական միջավայրի աուդիտ և վերլուծություն:
  - ❖ Ուղղիչ և նախազգուշացնող գործողությունների իրականացման հնարավորությունների որոշում:
- ◆ Համալսարանի համակարգային բարելավման ապահովումը անհրաժեշտ է կատարել պլանային կարգով՝

  - ❖ Կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ աշխատանքների պլանավորումը անհրաժեշտ է իրականացնել բոլոր մակարդակների վրա:
  - ❖ Համալսարանի կողմից անհրաժեշտ է պարբերաբար կազմել ռեսուրսային բազայի բարելավման պլան:

### 2.2.3. ՄԿԾ-երի իրականացման ռեսուրսային ապահովման գնահատում

Համալսարանի ղեկավարության կողմից անցկացվում է ՄԿԾ-ների իրականացման համար ռեսուրսային բազայի առկայության գնահատում, մեխանիզմների մշակում՝ ռեսուրսային բազայի արդիականացման և կատարելագործման ուղղությամբ:

- ◆ Կատարվում է կրթական ծրագրի ռեսուրսային ապահովվածության հիմնավորում՝
  - ❖ Ռեսուրսային առկա վիճակի գնահատում, խնդիրների բացահայտում:
  - ❖ Ռեսուրսների ձեռքբերման մեխանիզմների մշակում:
  - ❖ Ռեսուրսների բաշխման մեխանիզմների մշակում:
  - ❖ Ռեսուրսների կառավարման մեխանիզմների մշակում:
- ◆ Դրված նպատակների իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝
  - ❖ Ուսումնասիրել համալսարանի գործունեության ռեսուրսային ապահովման խնդիրները:
  - ❖ Բացահայտել Համալսարանի գործունեության ռեսուրսային ապահովման գործընթացների կառավարման խնդիրները:
  - ❖ Մշակել նպատակային ցուցանիշների համակարգ՝ համալսարանի գործունեության ռեսուրսային ապահովման գործընթացների համար:
  - ❖ Կատարել վերլուծություն և մոդելավորել (կառուցել) ռեսուրսների գնման գործընթացը:
- ◆ Ռեսուրսային բազայի օգտագործման արդյունավետության գնահատման քայլերն են՝
  - ❖ ՄԿԾ-ում ներառվող դասընթացների ապահովման համար փաստացի ռեսուրսային բազայի ուսումնասիրում:
  - ❖ Մշտադիտարկում և գրառումների իրականացում:
  - ❖ Վերլուծության իրականացում:
  - ❖ Ռեսուրսային ապահովվածության գնահատում:

### 3. Ռեսուրսների ապահովման մեխանիզմներ

3.1. Համալսարանի ՄԿԾ-երի իրականացման ռեսուրսային ապահովման միասնական մեխանիզմի մշակումը անհրաժեշտ է՝

- ❖ Ռեսուրսների համախմբի կառավարման նոր կառուցվածքի ստեղծման համար:
- ❖ Ռեսուրսների համախմբի կանխատեսման ճշտությունը բարձրացնելու համար:
- ❖ Համալսարանի ֆինանսական պլանավորման մեխանիզմի արդյունավետ օգտագործման համար:
- ❖ Ռիսկ-մենեջմենթի մեթոդների կիրառման համար՝ ֆինանսական ռիսկերի նվազեցման համար:
- ❖ Նպատակների որոշման ճշտության բարձրացման համար՝ ռեսուրսային ապահովման ծախսերի որոշման և բաշխման հարցում:

3.2. Ռեսուրսային ապահովման մեխանիզմը Համալսարանի ենթակառուցվածքային տարրերի համակարգ է, որը անհրաժեշտ է ռեսուրսների բաշխման համար ստորաբաժանումների միջև:

3.3. Ռեսուրսների ապահովման մեխանիզմները պետք է երաշխավորեն մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումը, ուսանողների և դասախոսների նորմալ գործառնման և օպտիմալ փոխգործունեության համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովումը:

3.4. Ռեսուրսային ապահովման մեխանիզմների մշակման համար անհրաժեշտ է՝

- ❖ Դասակարգել և վերլուծել ֆինանսական միջոցների և ներդրումների չափերը և գնահատել ռեսուրսային ապահովման չափը իրականացվող կրթական ծրագրի համար:
- ❖ Իրականացնել դրամաշնորհային ծրագրեր:
- ❖ Մշակել չափանիշներ՝ ռեսուրսային ապահովվածության առաջնային տարբերակների հիմնավորման համար:

3.5. Ռեսուրսային ապահովումը Համալսարանի կարևորագույն ֆունկցիաներից մեկն է, որի իրականացումը որոշում է Համալսարանի զարգացումը և գործառնումը:

3.6. Ռեսուրսներով ապահովման մեխանիզմներն են՝

- ❖ Կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերում և բաշխում:

- ❖ Ռեսուրսների բացահայտմանը ուղղված մշտադիտարկման կազմակերպում: Շահակից կողմերի ֆիքսում: Ռեսուրսներից շահակիցների բավարարվածության մակարդակի ուսումնասիրում:
- ❖ Կրթական գործընթացի որակը որոշող շահակիցների պահանջների՝ բնութագիրների ձևափոխում:
- ❖ Արդյունքների հիման վրա ռեսուրսների պլանավորման մեխանիզմների մշակում:
- ❖ Ռեսուրսային ապահովվածության համար ֆինանսական միջոցների ձեռքբերման, բաշխման և օգտագործման մեխանիզմների մշակում:
- ❖ Ռեսուրսային բազայի անհրաժեշտության հիմնավորում:
- ❖ Ռեսուրսների բաշխման մեխանիզմների մշակում:
- ❖ Կրթական ծրագրի հիմնական գործընթացների պլանավորում
- ❖ Ռեսուրսային բազայի ձեռքբերում, ներդրում և ապահովում ըստ ՄԿԾ-ների իրականացման գերակա մասնագիտությունների և ուղղությունների:



Ռեսուրսային ապահովում ըստ գործընթացների

|                                                 |                                                                                                                                                                                                                                                                                                                      |
|-------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|                                                 |                                                                                                                                                                                                                                                                                                                      |
| <b>Լսարանային ֆոնդի պլանավորում և ապահովում</b> | <p><i>Ուսումնական լսարաններ՝ դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացման համար:</i></p> <p><i>Մասնագիտացված ուսումնական տարածքներ՝ ուսումնական լաբորատորիաներ, արհեստանոցներ:</i></p>                                                                                                         |
| <b>Նյութա-տեխնիկական ապահովում</b>              | <p><i>Ուսումնական սարքավորումներ՝ դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացման համար՝ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ, սարքավորումներ լաբորատոր մասի փորձարարական մասի անցկացման համար:</i></p> <p><i>Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման համար սարքավորումներ:</i></p> |
| <b>Տեղեկատվական ապահովում</b>                   | <p>Ցանցային տեխնոլոգիաների առկայություն, էլեկտրոնային գրադարանի, էլեկտրոնային ռեսուրսային բազային առկայություն:</p>                                                                                                                                                                                                  |